Թեմատիկ պլանավորում
«Հայոց պատմություն»
8-րդ դասարան
Տարեկան 68 ժամ
Շաբաթական 2 ժամ
ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Ս.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Դասագրքի հեղինակներ՝

1. Հայոց պատմություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար /Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան, Արամ Նազարյան, Հակոբ Մուրադյան/ Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2018 թ.

Ներածություն		
նպատակ		Նպաստել «Հայոց պատմություն» առարկայի 8-րդ դասարանի բովանդակային հիմնական նյութի, հայոց պատմության Նոր շրջանի /XVIդարի կեսերից մինչև 1918 թ./ վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, հիմնական առանձնահատկությունները բացատրելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա՝ մեկնաբանել և բացատրել Հայոց պատմության Նոր շրջանի առանձնահատկությունները
Ժամ	Էջ	Դաս
1	«Զանգակ» 3-4	Ներածություն
Բաժին 1 Հայաստանը XVIIդարի երկրորդ կեսից մինչև XIXդարի առաջին կես 20 ժամ		
Գլուխ/ Թեմա I. Ազատագրական պայքարի նոր փուլը /«Զանգակ» / Ազատագրական պայքարի նոր փուլը 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում		

Նպատակ	Նպաստել 17-րդ դ. երկրորդ կեսի և 18-րդ դարի ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի ազատագրական պայքարի կարևոր փաստերը, իրադարձությունները և պայքարի հայտնի գործիչների գործունեությունը, ազգային-ազատագրական պայքարի պատմական ժամանակաշրջանի առանձնահատկությունները, արտաքին քաղաքական կողմնորոշումը, Հայաստանի քաղաքական մասնատվածության հետևանքները բնութագրելու, բացատրելու, հիմնավորելու, համեմատելու, մեկնաբանելու, կարծիք հայտնելու և արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** - Ներկայացնել Հայաստանի ազատագրության համար մղվող պայքարի աշխուժացման պատճառները 17-րդ դարի 2-րդ կեսին - Տարբերակել և հիմնավորել ներքին և արտաքին պայքարին խթանող և խանգարող հանգամանքները - Վեր հանել և գնահատել անհատի գործոնը ազատագրական պայքարում՝ մասնավորեցնել Իսրայել Օրու օրինակով:
	Կարողանա՝ - Բնութագրել Արցախի ազատագրական պայքարի հայտնի կազմակերպիչների, ղեկավար գործիչների և նրանց գործունեությունը: - Վերհանել ազատագրական շարժման հայտնի գործիչների դերը: - բացատրել սղնախների նշանակությունը - գնահատել Արցախի ազատագրական պայքարի ձեռքբերումները
	Կարողանա՝

		- Բնութագրել Սյունիքում ազատագրական պայքարի հայտնի կազմակերպիչների, ղեկավար գործիչների և նրանց գործունեությունը: - Մեկնաբանել հայ-պարսկական հարաբերությունները Դավիթ Բեկի և նրա հաջորդների գործունեության ընթացքում: - Բնութագրել և արժևորել Հալիձորի ճակատամարի դերն ու նշանակությունը: - Համեմատել Սյունիքի ազատագրական պայքարի ղեկավար գործիչների դիրքորոշումը և կատարած դերը պայքարի հանգուցալուծման մեջ: - Արժևորել Սյունիքի ազատագրական պայքարի պատմական դերն ու նշանակությունը:
		Կարողանա՝ - Բացատրել Խամսայի մելիքության նշանակությունը - Ընդգծել հայ-պարսկական համագործակցության դրական հետևանքները Արցախի ինքնավարության գործում: - Բացատրել և գնահատել գաղութահայ կենտրոնների դերը հայապահպանման գործում: - Ներկայացնել և գնահատել Հովսեփ Էմինի գործունեությունը
		Կարողանա՝ - Ներկայացնել Մադրասի հայրենասիրական խմբակի գործունեությունը - Ներկայացնել Ռուսաստանահայ ազգային գործիչների գործունեությունը - Ներկայացնել և համեմատել հայտնի գործիչների կողմից կազմված ծրագրերի հիմնական դրույթները:
Ժամ	**Էջ**	**Դաս**

1	«Զանգակ» 6-10	Դաս 1 «Հայ ազատագրական պայքարի վերելքը»:
1	«Զանգակ» 11-15	Դաս 2. «Զինված պայքարը Արցախում»:
1	«Զանգակ» 16 -19	Դաս 3. «Զինված պայքարը Սյունիքում»:
1	«Զանգակ» 20 - 23	Դաս 4. «Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ.» /Հայկական ինքնավարությունն Արցախում: Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները/:
1	«Զանգակ» 24 - 27	Դաս 5. «Ազատագրական շարժումները 18-րդ դարի 30-80-ական թթ.» /Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրության ծրագրերը/:
1	**Կրկնություն**	
Գլուխ II /«Զանգակ» / Հայաստանը XIX դարի առաջին կեսին/4 ժամ/		
Նպատակ		Նպաստել XIX դարի սկզբին Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական կացության, վարչական կյանքի մասին գիտելիքների ձեռք բերմանը, կարևոր իրադարձությունները, հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ կապված նշանավոր գործիչների և նրանց հետ կապված

	փաստերը, ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմների պատճառները, կնքված պայմանագրերի հիմնական դրույթները, ժամանակաշրջանին բնորոշ որոշ հասկացությունները բացատրելու, համեմատելու, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին անցնելու իրողության վերաբերյալ, տեսակետ հայտնելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** - Ներկայացնել և բացատրել Արևելյան Հայաստանի վարչա-քաղաքական սոցիալ-տնտեսական կյանքի հետ կապված կարևոր փաստեր, - մեկնաբանել Գյուլիստանի պայմանագրի հիմնական դրույթները, - թվարկել 19-րդ դարի սկզբին Ռուսաստանին միացած հայկական տարածքները և տարբերակել Ռուսաստանի կազմի մեջ մտնելու եղանակները:
	Կարողանա՝ - ներկայացնել հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ կապված նշանավոր գործիչների և նրանց հետ կապված կարևորագույն փաստերը - բացատրել Թուրքմենչայի պայմանագրի հիմնական դրույթները: - գնահատել պարսկահայերի վերաբնակեցումը:
	Կարողանա՝ - Ներկայացնել հայ հայրենասեր գործիչներին և նրանց հետ կապված փաստեր - Տեսակետ հայտնել Հայկական մարզ վարչական միավորի ունեցած նշանակության վերաբերյալ,

		- ներկայացնել Ցարական իշխանության կատարած վարչական փոփոխությունները Անդրկովկասում: - բացատրել եկեղեցական կանոնադրություն հիմնական դրույթները: - Մեկնաբանել Հայոց եկեղեցու գործառույթների փոփոխությունը Կանոնադրության ընդունման արդյունքում:
		Կարողանա՝ - ներկայացնել ռուս-թուրքական պատերազմների գործիչներին և դրանց հետ կապված կարևորագույն փաստերը: - Բացատրել ռուս-թուրքական պատերազմների պատճառները և վեր հանել հայ ժողովրդի շահագրգիռ դիրքորոշումը: - Համեմատել 19-րդ դարի սկզբի ռուս-թուրքական պայմանագրերի դրույթները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ»՝ 28-30	Դաս 6 «Արևելյան Հայաստանը XIX դարասկզբին»
1	«Զանգակ»՝ 31-35	Դաս 7. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման նոր փուլը»:
1	«Զանգակ»՝ 36-38	Դաս 8. «Ռուսական վարչաձևի հաստատումը Արևելյան Հայաստանում»:
1	«Զանգակ»՝ 39-42	Դաս 9. «Արևմտյան Հայաստանը XIX դարի առաջին կեսին»:
Գլուխ III **Հայ մշակույթը նոր շրջանի առաջին փուլում /«Զանգակ»/**		

Նպատակ	Նպաստել XVII-XIX դարերի հայկական մշակույթի կենտրոնների, մշակույթի բնագավառների ու ճյուղերի կրթական հաստատությունների, նշանավոր գործիչների և ստեղծագործությունների և արվեստի գործերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները, հայկական դպրոցների դերը նոր սերնդի կրթության և հայապահպանման գործում գնահատելու արժևորելու, համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** - Ներկայացնել և համեմատել XIX դդ առաջին կեսի մշակութային կյանքի հիմնական կենտրոնները: - Ներկայացնել, բացատրել, համադրել ժամանակաշրջանի կրթական համակարգի վերաբերյալ կարևոր փաստերը: - թվարկել XVII- XIX դդ առաջին կեսերին բացված հայկական դպրոցները, - գնահատել հայկական դպրոցների դերը նոր սերնդի կրթության և հայապահպանման գործում՝ ընդգծելով գաղթօջախների ունեցած դերը:
	Կարողանա՝ - Ներկայացնել և նշանավորել Արևելյան Հայաստանում բացված առաջին տպարանի մասին փաստեր - Կարևորել հայկական առաջին ամսագրի դերն ու նշանակությունը - Արժևորել տպագրության դերը հայկական իրականության մեջ՝ գաղափարական պայքարում:
	Կարողանա՝

		- Թվարկել և գնահատել XVII- XIX դդ առաջին կեսի մշակույթի նշանավոր կենտրոնները բնագավառներն ու ճյուղերը, - Ընդգծել առանձին գործիչների ունեցած դերը հայկական իրականության մեջ : - արժևորել ժամանակաշրջանի մշակութային ձեռքբերումները հայապահպանման գործում:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ» 43-45	Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը»
1	«Զանգակ» 45-46	Դաս 10 «Մշակութային կյանքի զարգացումը»
1	«Զանգակ» 47-50	Դաս 11 «Գիտությունը և արվեստը»
1	**Կրկնություն**	
1	**Ամփոփիչ կրկնություն**	
Բաժին II /32 ժամ/ Հայաստանը XIX դարի երկրորդ կեսին և XX դարասկզբին		
Գլուխ IV /«Զանգակ»/		
Նպատակ		Նպաստել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության, կարևոր առանձնահատկությունների ու ընդհանրությունների վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, կարևոր իրադարձությունները և փաստերը բացատրելու, տարբերակելու, համեմատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - քարտեզի վրա ցույց տալ և նշել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սահմանաբաժանումը - բացատրել և մեկնաբանել Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի կարևոր առանձնահատկությունները ու դրանց վրա ազդող հիմնական գործոնները:

		Կարողանա՝ - Ներկայացնել Արևմտյան Հայաստանի դրության վերաբերյալ կարևոր փաստերը - բացատրել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի կարևոր առանձնահատկությունները և դրանց վրա ազդող հիմնական գործոնները: - մեկնաբանել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի կարևոր ընդհանրություններն ու առանձնահատկությունները
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ» 54-58	Դաս 12 «Արևելյան Հայաստանի դրությունը»
1	«Զանգակ» 59-63	Դաս 13 «Արևմտահայերի դրությունը»
Գլուխ 5 /«Զանգակ»/ Հայ ազգային - հասարակական շարժումները:		
Նպատակ		Նպաստել Հայ ազգային - հասարակական շարժումների և հասարակական-քաղաքական հոսանքների մասին գիտելիքների ձեռք բերմանը, Զեյթունի ապստամբության կարևորագույն դրվագները, սահմանադրական շարժման նախադրյալները և տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունությունը համեմատելու, բացատրելու, վերլուծելու, արժևորելու, դիրքորոշում արտահայտելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - արտահայտել սեփական դիրքորոշումը հայ հասարակական ու քաղաքական հոսանքների նկատմամբ և հիմնավորել:
		Կարողանա՝ - Ներկայացնել և վերլուծել սահմանադրական շարժման

		նախադրյալները, «Ազգային սահմանադրություն»-ը: - Ներկայացնել և գնահատել Զեյթունի 1862 թվականի ապստամբությանն կարևորագույն դրվագները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ» 64 - 67	Դաս 14. «Հասարակական -քաղաքական միտքը»:
1	«Զանգակ» 68 - 72	Դաս 15. «Արևմտահայերի ազգային կյանքի երկու նշանավոր շրջադարձերը»:
Գլուխ 6 /«Զանգակ»/ Հայկական Հարցի միջազգայնացումը		
Նպատակ		Նպաստել ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմի, ժամանակի նշանավոր գործիչների և նրանց գործունեության հետ կապված կարևոր դրվագները և Հայկական Հարցի միջազգայնացման և ունեցած հետևանքների վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, պատերազմող կողմերի նպատակների, Հայկական Հարցի ծագման և միջազգայնացման գործընթացի, պայմանագրերի և տվյալ ժամանակաշրջանի նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - ներկայացնել 1877-1878 թթ պատերազմի գործիչների և նրանց գործունեության հետ կապված կարևոր դրվագները:
		Կարողանա՝ - Բացահայտել և վերլուծել Հայկական Հարցի ծագումը, միջազգայնացման գործընթացը և հետևանքները: - Բացատրել Հայկական Հարց, «Երկաթե շերեփ» հասկացությունները:

Ժամ	Էջ	Դաս
1	«Զանգակ» 73 - 75	Դաս 16. «Ռուս-թուրքական 1877 - 1878թթ պատերազմը և Հայաստանը»:
1	«Զանգակ» 76 – 79	Դաս 17. «Հայկական Հարցի միջազգայնացումը»:
Գլուխ VII /«Զանգակ»/ Ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի 70-90-ական թվականներին		
Նպատակ		Նպաստել 19-րդ դարի 70-90-ական թթ. ազգային ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, ազատագրական պայքարի հետ կապված կարևոր փաստերը, ազատագրական շարժման կարևորագույն կենտրոնները, նշանավոր գործիչների գործունեությունը, նշանավոր դրվագները բացատրելու, համեմատելու, գնահատելու, դիրքորոշում հայտնելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - ներկայացնել ազատագրական շարժման կարևոր կենտրոնները և գործիչներին: - բացահայտել ազգային-ազատագրական պայքարի առանձնահատկությունները XIX դարի երկրորդ կեսին:
		Կարողանա՝ - ներկայացնել հայ ազգային կուսակցությունները և գործիչներին: - բացատրել հայ ազգային կուսակցությունների ծրագրերի առանձնահատկությունները - Արտահայտել դիրքորոշում հայ քաղաքական կյանքում կուսակցությունների ունեցած դերի վերաբերյալ:
		Կարողանա՝ - բացատրել «ֆիդայական շարժում» հասկացությունը,

		- վերլուծել ֆիդայական շարժման առաջացման նախադրյալները, - արժևորել ազատագրական պայքարի զինված փուլը:
		Կարողանա՝ - բացատրել 1890-ական թթ. արևմտահայության բնաջնջման Աբդուլ Համիդ II ծրագիրը - մեկնաբանել «Զանգվածային կոտորածներ հասկացությունը»:
		Կարողանա՝ - բացատրել «ինքնապաշտպանական մարտեր» հասկացությունը: - նկարագրել 1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերը - արժևորել ինքնապաշտպանական մարտերի ունեցած դերն ու նշանակությունը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ» 80-82	Դաս-18.«Ազատագրական խմբակները և կազմակերպությունները»
1	«Զանգակ» 83-87	Դաս-19. «Հայ ազգային կուսակցությունները»
1	«Զանգակ» 88-91	Դաս-20 Հայդուկային շարժումը
1	«Զանգակ» 92-94	Դաս-21. Հայոց Ցեղասպանության սկիզբը.Դիմադրական մարտերը 1890-ական թվականներին.(Հայոց ցեղասպանության սկիզբը
1	«Զանգակ» 94-96	Դաս-21. Հայոց Ցեղասպանության սկիզբը. Դիմադրական մարտերը 1890-ական թթ.(Սասունի և Զեյթունի հերոսամարտերը, Պաշտպանական կռիվները Վանում)
1	**Կրկնություն**	
Գլուխ 8. Ազգային շարժումների ծավալումը 20-րդ դարասկզբին /«Զանգակ»/		

Նպատակ	Նպաստել 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, Առաքելոց վանքի կռիվը և Սասունի ապստամբության հիմնական դրվագները, Հայկական հարցի վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի հիմնական դրույթները, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը, կարևոր հասկացությունները բացատրելու, վերլուծելու, համեմատելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ	**Կարողանա՝** - ներկայացնել և գնահատել Ս. Առաքելոց վանքի կռվի և Սասունի 1904-ի ապստամբության հիմնական դրվագները, - բացատրել Ս. Առաքելոց վանքի կռվի և Սասունի 1904-ի ապստամբության էությունը՝ որպես ազատագրական պայքարի նոր մարտավարության դրսևորումներ:
	Կարողանա՝ - ներկայացնել ցարական կառավարության գաղութային քաղաքականության դրսևորումները - ներկայացնել և վերլուծել հայ-թաթարական կռիվների ընթացքը, նշանակությունը և հետևանքները - արժևորել հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը
	Կարողանա՝ - բացատրել 1912-1914 թթ. Հայկական հարցի վերաբացման հիմնական փաստերը,

		- ներկայացնել և մեկնաբանել Ա. Մանդելշտամի հայկական բարենորոգումների նախագիծը: - բացատրել ռուս-թուրքական համաձայնագրի հիմնական դրույթները: - համեմատել Հայկական բարենորոգումների ռուսական նախագիծը և ռուս-թուրքական համաձայնագիրը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ» 97-102	Դաս 22. Ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանում
1	«Զանգակ» 102-106	Դաս 23. Համազգային պայքարի վերելքը
1	«Զանգակ» 106-112	Դաս 24 Արևմտահայությունը Առաջին աշխարհամարտի նախօրեին
Գլուխ 9. Հայաստանը և Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին: /«Զանգակ»/		
Նպատակ		Նպաստել Առաջին աշխարհամարտի, դրանում հայ ժողովրդի մասնակցության, հայերի ցեղասպանության թուրքական ծրագրի, Հայոց մեծ եղեռնի և ինքնապաշտպանական մարտերի, հայության նյութական և մարդկային կորուստների, Ռուսաստանյան հեղափոխությունների ժամանակ հայ ժողովրդի դրության, Մայիսյան հերոսամարտերի հիմնական դրվագների մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները բացատրելու, համեմատելու, դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - բացատրել Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակը՝ Պանթյուքիզմի և

	Պանիսլամիզմի ծրագրերը իրականացնելու համատեքստում - պարզաբանել Կովկասյան ճակատում Ռուսական կայսրության և Օսմանյան կայսրության ծրագրերը, - քննարկել Կովկասյան ճակատի կարևոր իրադարձությունները - համեմատել Հայաստանի նկատմամբ ռուսական և թուրքական կառավարությունների վարած քաղաքականությունը, կատարել եզրահանգումներ:
	Կարողանա - վերլուծել և արժևորել կամավորական ջոկատների ստեղծումն ու գործունեությունը: - արտահայտել դիրքորոշում կամավորական շարժում վերաբերյալ:
	Կարողանա՝ - բացատրել «Ցեղասպանություն» հասկացությունը միջազգային իրավունքում, - ներկայացնել և բացահայտել հայերի ցեղասպանության թուրքական ծրագիրը, վերը նշվածից բխեցնելՄեծ Եղեռնի հիմնական պատճառները, - մեկնաբանել հայերի ցեղասպանության իրականացման փուլերը
	Կարողանա՝ - ներկայացնել և վերլուծել 1915 թ ինքնապաշտպանական մարտերի հիմնական դրվագներն ու կարևոր փաստերը - թվարկել ինքնապաշտպանական մարտերի նշանավոր գործիչներին - վեր հանել 1915թ. ինքնապաշտպանական մարտերի պատմական նշանակությունը
	Կարողանա՝

		- ներկայացնել և բնութագրել իշխանության նոր մարմինները Փետրվարյան հեղափոխությունից հետո - գնահատել հայերի նկատմամբ միապետական Ռուսաստանի և Ժամանակավոր կառավարության վարած քաղաքականությունը: - ներկայացնել արևմտահայերի և արևելահայերի համագումարները, գործիչներին, ընդունած հիմնական որոշումները:
		Կարողանա՝ - ներկայացնել և բացահայտել իրարության շրջադարձը Անդրկովկասում և Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության շրջանում: - բացատրել «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի հիմնական դրույթները: - գնահատել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանքները:
		Կարողանա՝ - ներկայացնել և բացատրել Հայկական զորամիավորումների ստեղծման նշանակությունը՝ Անդրկովկասի անկախացման գործընթացում:
		Կարողանա՝ - վեր հանել և արժևորել մայիսյան հերոսամարտերի հիմնական դրվագները և կարևորագույն փաստերը - թվարկել Մայիսյան հերոսամարտերի նշանավոր գործիչներին, - արտահայտել դիրքորոշում Մայիսյան հերոսամարտերի ունեցած պատմական նշանակության վերաբերյալ:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ» 112 - 116	§ 25. «Համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը»:
1	«Զանգակ» 117 - 120	§ 26. «Հայ կամավորական շարժումը»:

1	«Զանգակ» 122 - 129	Դաս 27. «Հայոց Մեծ եղեռնը»
1	«Զանգակ» 129 - 134	Դաս 28 .«1915 թվականի հերոսամարտերը»
1	«Զանգակ» 134-137	Դաս 29. «Ազգային –քաղաքական կյանքի վերելքը 1917թ.»
1	«Զանգակ» 138-141	Դաս 30. «Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը»
1	«Զանգակ»142-145	Դաս-31. «Ռազմաքաղաքական իրավիճակը և Անդրկովկասի անկախացումը»
1	«Զանգակ» 146-152	Դաս-32. «Մայիսյան փառահեղ հերոսամար-տերը»
1	**Կրկնություն**	
Գլուխ X / «Զանգակ» / Հայկական մշակույթը նոր շրջանի երկրորդ փուլում		
Նպատակ	Նպաստել XIX դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. ընկած ժամանակաշրջանի հայկական մշակույթի կենտրոնների, կարևորագույն բնագավառների, կրթական հաստատությունների, նշանավոր գործիչների և փաստերի, ստեղծագործությունների և արվեստի գործերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, մշակույթի զարգացման պայմանները, առանձնահատկությունները, ձեռքբերումները համեմատելու, համադրելու, բացատրելու, բնութագրելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:	
Վերջնարդյունքներ	**Կարողնա՝** - ներկայացնել և բացատրել նոր շրջանի երկրորդ փուլի հայկական մշակույթի նշանավոր կենտրոնները, կարևորագույն	

	փաստերը և գործիչներին, կրթական հաստատությունները, - առանձնացնել և մեկնաբանել հայ մշակույթի վերելքը պայմանավորող գործոնները:
	Կարողանա՝ - բացահայտել պատմական ժամանակաշրջանի ազդեցությունը կրթության և մշակույթի զարգացման վրա, - ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի գիտության զարգացման վերաբերյալ փաստեր, նշանավոր գործիչների - արժևորել ժամանակաշրջանի բնական գիտությունների և հայագիտության ձեռքբերումները:
	Կարողանա՝ - ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի գրականության, հայ մամուլի ձեռքբերումները, նշանավոր գործիչների: - թվարկել պարբերականները ընդգծել պարբերականների դերն ու նշանակությունը, - բացահայտել քաղաքական իրավիճակի և ազգային կուսակցությունների դերն ու ազդեցությունը մամուլի և պարբերականների տարածման և զարգացման գործում
	Կարողանա՝ - ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի արվեստի (կերպարվեստ, թատրոն) ձեռքբերումները և նշանավոր գործիչների: - վերլուծել և համադրել արևելահայ և արևմտահայ մշակույթի ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները:
	Կարողանա՝

		- ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի արվեստի (երաժշտություն, ճարտարապետություն) ձեռքբերումները և նշանավոր գործիչների: - վերլուծել և համադրել արևելահայ և արևմտահայ մշակույթի ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ» 153-156	Դաս 33 «Մշակույթի վերելքը: Կրթությունը»
1	«Զանգակ» 157-159	Դաս 34 «Գիտության զարգացումը»
1	«Զանգակ» 160-163	Դաս 35 «Գրականությունը և մամուլը»
1	«Զանգակ» 164-165	Դաս 36 «Արվեստը և ճարտարապետությունը» /Կերպարվեստ: Թատրոն/
1	«Զանգակ» 165-167	Դաս 36 «Արվեստը և ճարտարապետությունը» /Երաժշտություն, ճարտարապետություն, Քաղաքաշինություն/
1	**Կրկնություն**	
Բաժին III **Հայկական գաղութները Նոր շրջանում /«Զանգակ»/** **/16 ժամ/**		
Գլուխ XI Ազգային կյանքի կազմակերպումը և մշակույթի զարգացումը /«Զանգակ»/		
Նպատակ		Նպաստել Նոր շրջանի հայկական գաղթավայրերի մասին գիտելիքների ձեռք բերմանը, առաջացման ժամանակաշրջանները, գաղութահայ կենտրոնները և գործիչներին, գաղթավայրերի կյանքին վերաբերող կարևոր դրվագները և իրադարձությունները բացատրելու, համեմատելու, գնահատելու, գաղթավայրերի դերը հայապահպանության գործում արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝**

		-բացատրել և հիմնավորել գաղութների առաջացման պատճառները -Ներկայացնել գաղութահայ հիմնական կենտրոնները -Քարտեզի վրա ցույց տալ խոշոր գաղութները
		Կարողանա՝ -Ներկայացնել գաղութահայ նշանավոր ազգային կառույցները և գործիչներին։ -Թվարկել Նոր դարերի գաղութահայ նշանավոր դպրոցները։
Ժամ	**Էջ**	**Դաս**
1	«Զանգակ»՝ 170-173	Դաս 37. «Հիմնական գաղթավայրերը և խոշոր համայնքները»։
1	«Զանգակ»՝ 174-178	Դաս 38 «Գաղթավայրերի դերը հայապահպանության գործում»։
1	**Կրկնություն**	
2	**Ամփոփիչ կրկնություն**	

Թեմատիկ աշխատանքներն ուսուցիչն՝ իր հայեցողությամբ, կարող է հանձնարարել թեմաներից հետո կրկնության համար նախատեսված ժամերի հաշվին։
Գործնական աշխատանքների հարցում ուսուցիչն ավելի ազատ է, դրանք կարող է հանձնարարել ցանկացած ժամի ընթացքում, կրկնության ժամերին կամ տանը։